

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շրջակա միջավայի Նախարարության «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Գիտության և զբոսաշրջության բաժնի 2025 թվականի առաջին եռամսյակի աշխատանքների

Հաշվետվություն

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի պահպանման գոտու կայուն զարգացման ընդհանուր նպատակն է՝պահպանել պարկի տարածքներում ներկայացված լանդշաֆտների, էկոհամակարգերի, ֆլորայի և ֆաունայի բազմազանությունը, աջակցել պահպանման գոտում գտնվող համայնքների տնտեսական զարգացմանը և ստեղծել հնարավորություններ բնակչության կենսամակարդակի բարձրացման համար:

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տեղամասերում անտառային ծածկույթների ուսումասիրության հաշվետվություն:

Ազգային պարկի 4 տեղամասերում կատարվել են մշտադիրտարկման աշխատանքներ պարկի և էկոպարեկային ծառայության աշխատակիցների կողմից ,որոնց արդյունքում չեն գրանցվել ապօրինի ծառահատման , հրդեհման և գողության դեպքեր: Արտակարգ դեպքեր նույնպես չեն գրանցվել:

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կենսաբազմազանության տվյալների հավաքագրման աշխատանքներ

Կատարվել է թռչունների և կենդանիների մշտադիտարկման աշխատանքներ, որի արդյունքում տեղամասերում գիտության և զբոսաշրջության աշխատակիցները ֆիքսել են 8 հատ սովորական հողմավար բազե /Falco tinnunculus/, 60 հատ կոնչան բադ /Anas platyrhynchos/, 15 հատ աղվես /Vulpes vulpes/, կարմիր բադ / Tadoma ferruginea/ -18 հատ , գանգրափետուր հավալուսն/ Pelecanus/ -25 հատ , մեծ ձկնկուլ /Phalacrocorax carbo/ -17 հատ, նապաստակ /Lepus/ 10 հատ , հայկական որոր /Larus armenicus/ -300 հատ, քարարծիվ (Aquila rapax) -6 հատ, մոխրագույն տառեղ / Ardea cinerea/ -20 հատ :

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կենդանական աշխարհի ներկայացուցիչների տեղաշարժի ուսումնասիրություն և ֆոտո թակարդների տեղադրում:

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են տեղաշարժի ուսումնասիրության աշխատանքներ, տեղադրվել են թվով 7 ֆոտոթակարդներ , որոնց օգնությամբ կարողացել ենք հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը կենդանիների տեղաշարժի վերաբերյալ: Հիմնականում գրանցվել են գայլեր (Canis lupus), աղվեսներ (Vulpes), նապաստակներ (Lepus) , ջրասամույր (Lutra), վարազ (Sus scrofa) և փոքր եղնիկ(Dama dama):

«Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի գիտության և զբոսաշրջության աշխատակիցների կողմից իրականցվել են թվով 7 կրթադաստիրակչական աշխատանքներ մարզի դպրոցներում:

Դասընթացների նպատակներն են սերմանել, կրթել, իրազեկել էկոզբոսաշրջության , ազգային պարկի ֆաունայի և ֆլորայի մասին և նոր գաղափարներ ստեղծման խթան դառնալ ապագա սերնդի համար:Դասընթացները օգնում են դպրոցականներին հասկանալ և կարևորել ազգային պարկի դերը և կարևորությունը:

Բավրա գյուղի միջնակարգ դպրոց

Աշոցք համայնքի միջնակարգ դպրոց

Ցողամարգ գյուղի միջնակարգ դպրոց

Ղազանչի գյուղի միջնակարգ դպրոց

Թավշուտ գյուղի միջնակարգ դպրոց

Լուսակերտ գյուղի միջնակարգ դպրոց

Մեծ Սեպասար գյուղի միջնակարգ դպրոց

Զբոսաշրջային մոնիթորինգի արդյուքներ

2025 թ-ի 1-ին եռամսյակում ունեցել ենք ինչպես տեղացի, այնպես էլ օտարերկրացի այցելուներ /ավելի քան **350** այցելու/, ովքեր շրջել են պարկի տարածքում : Նրանց ներկայացվել է ազգային պարկի կենսաբազմազանությունն ու զբոսաշրջային հնարավորությունները:Ազգային պարկում գործող գիշերակացի ծառայությունից օգտվել են թվով 22 զբոսաշրջիկ: Այցելուների գերակշռող տոկոսը արտագնա զբոսաշրջիկներ են:

Ընթացիկ աշխատանքների իրականացում

Այս եռամսյակի ընթացքում կատարվել են նախարարության և տնօրինության կողմից նշանակված բոլոր հանձնարարականները: Գիտության և զբոսաշրջության բաժնի աշխատակիցները կատարել են իրենց աշխատանքը բարեխղճորեն: Պարբերաբար թարմացվել է ֆեյսբուքյան էջը , ապահովելլով հետևորդների նոր հոսք:

Գիտության զբոսաշրջության

Բաժնի պետ Հ. Ստեփանյան

Զբոսաշրջության, բնապահպանական Հ. Ոսկանյան
իրազեկման, հասարակության
հետ կապերի և մոնիթորինգի մասնագետ

Կենսաբազմազանության մոնիթորինգի մասնագետ Ա. Իսպիրյան